

ՀԱՅԵՐԷՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներկ

Մեր բառը ներկ = «tinta , tinto , tintura» եւ ներկ-ան-ե-մ , ե-ներկ = «tingere , tignere , colorire» բուն հայ՝ այսինքն հնդկադերմանական կամ հնդեւրոպական եւ ո՛չ պարսկերէնէն առնուած բառ կ'երեւի ինձ ըլլալ : Այս մասին կուզեմ իմ կարծիքս բացատրել :

Սկսկնք այս բացատրութիւնը անմիջապէս երանգ = «colore» (=ներկ = «tinto») բառի հետ , որ՝ ըստ հռչակաւոր հայերէտ Հիւրշմանի՝ պարսկերէնէն առնուած բառ է . նոր պարսկ . rang — «colore» , պազենդ . rang , սանսկր . ranga . (Hübschmann , Armenische Etymologie , էջ 148) : Այս սանսկրիտ ranga բառը կարծեմ ես հիմայ հայերէն ներկ բառ որի մէջն ալ գտնել , միայն իրը բուն հայերէն բառ :

Սանսկր . bhanga = «Brechung , Bruch , Welle» եւ այլն ալ ունինք բեկ = «zerbrochen , gebrochen» իրը բուն հայերէն բառ (echtarmenisches Wort) մեր մեղեցիկ եւ հին հնդեւրոպական լեզուի մէջ . ուրիմ սանսկր . ranga ալ պէտք է հայ . *rեկ ձեւին համեմատէ : Բայց ի՞նչպէս բացատրենք հիմայ բոլոր բառը , որուն *rեկ միայն վերջը կըրնայ ըլլալ : — Բոլոր բառը բացատրելու համար ուրիշ բուն հայերէն բառ մը պէտք է որ առաջ բերենք . այսպէս՝ նիս = «Lage , Sitz , Residenz» բառը , որ է նի (վար) + արմատ sed = «նստիմ» : Արդ՝ հայ . ներկ ալ , ըստ իս , այս նի ունի : Հայերէն *նի-բեկ յետոյ եղաւ *ն'րեկ , ինչպէս հայ . «նկար» — նոր պրո . նիկար , հյ . «նշան» = նոր պրո . նիշան (տես նաև Հիւրշմանի նշանաւոր յօդուածը «Für Chronologie der armenischen Vocalgesetze» իմ ուսումնաթերթիս «Sprachwissenschaftliche Abhandlungen»ի մէջ , հատոր Ա , պրակ 8) եւ վերջապէս *ն'րեկ ձեւէն եղաւ այժմնայ «ներկ» բառը . ինչպէս եղած է հայերէն «դժոխք» = նոր պրո . դոզախ , պազենդ . դոժախ , ձայնաւորներու կարգի փոփոխութեամբ (durch Umstellung der Vocale . ըստ Հիւրշմանի . տես Արmenische Etymologie , էջ 143) :

Սպանանել

Հայերէն սպանանել = «սպաննեմ»՝ ոչ ուժուցիչ հնդեւ բռպական բառ է • յունարէն ծրագիր՝ «պակասութիւն» • երկուքն ալ հնդեւը պական ՏՊ- (սպի-) արմատէն • նշանակութեան մասին հմտա • հայ • պակաս = «մանո, deficiente» եւ հայ • ոճը պակաս առնեն և = «պակասեցուցանեմ» զրկեմ, far manco, diminuire, privare» եւ ջնջեն ի միջոյ = սասակեմ, distruggere, uccidere» • որով մի եւ նոյն ժամանակ մեր կարծիքն ալ կը հաստատուի :

Մունջ

Հայերէն մունջ=«մուստ» բառը զասուած է հնդեւ բռպական բառերու կարգին Հիւրշմանի յիշեալ Քերկանութեան մէջ, էջ 476, հետեւելով Ցուցը (Kuhn, Zeitschrift 32, 21), որ համեմատած է յունարէն լինուծ = «մունջ, muto», լատ. mūtus բառերու հետ: Ես «մունջ» բառը յունարէն լինուծ = «գոցեմ» (ρερωνερ կամ աչուըները) ձեւէն կը կարծեմ: այսպէս հնդեւը • մուստ = «գոցող զբերանը», հայ • -ջ վերջաւորութեամբ, ինչպէս կը տեսնենք «անուրջ» = յուն • ծնար, «ողջ» = հին իր • սկզ, «կամուրջ» = յուն • ցէֆնցա բառերու մէջ:

ԴՈՒԿԱՆ ԲԱԴՐՈՒԹԱՆԵԱՆ
Անեցի

